

Այս պատմական աքտը սակայն միաժամանակ միասնականության աքտ մըն էր գաղութահայության և Մայր Հայրենիքի հայ ժողովրդի և իր պետության՝ Սովետական Հայաստանի միջև, որուն նաև այս միջոցով

ծառայեց այսօրվա ծերունադարձ Հոբելյարը։ Մաղթենք, որ իր բազմաբեղուն կյանքը երկարի այնքան տարիներ, որքան որ պատկառելի Հոբելյարը դեռ իր մեջ տեսի և կորով կղզա աշխատելու և արտադրելու։

(«Հայաստանեան ձախառ» 23 նոյեմբեր 1947 թ.)

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿԻ ԿՈՉԸ

Մեր վարչական առօրյա գրադոմներեն անկախ, ավելի քան քսան տարիներն ի վեր դբադած ենք հայերեն ձեռագիրներու քննությանմբ։ Ցարդ հրատարակած ենք Հալեպի, Անթիլիասի և Սուրիո մասնավորներու քով գտնվող հայերեն ձեռագրաց մայր ցուցակները։ Մոտ օրեն ֆարիզի մեջ տպագրության պիտի հանձնենք նրուադեմի ձեռագիրներու մեր մայր ցուցակի ընդարձակ Ա հատորը։ Նկատելով որ մեր ցեղին ենթարկված աղետով հազարավոր ձեռագիրներ կորսվեցան և շատ քիչեր միայն մնացին հայ և օտար մասնավորներու քով, այդ քիչերն ալ անխուսափելի կորուստն փրկելու առաջադրությամբ ավելի քան տարիներ ի վեր հետամուտ եղանք Եվրոպայի մեջ ևս գտնելու, մասնավորներու սեփականությունը եղող ձեռագիրներ և ցարդ պատահաբար գտանք Բաբե և

վելի, զորս խնամով քննեցինք և ցուցակագրեցինք և բոլորն ալ վերադարձուցինք իրենց տերերուն։

Հայրաբար և հանուն հայ մշակույթի անցյալ բեկորներու փրկության, սրտագին կոչ կուղղենք Եվրոպայի մեր սիրելի ժողովուրդին, որ իր մոտ գտնված հայերեն ձեռագիրները վստահորեն հանձնի մեզի, ֆարիզի մեր հասցեն, 15 ռիվ. Ժան Կուսմոն, որպեսզի բոլորն ալ քննենք և հետագայի առանձին ցուցակով հրատարակենք, հօգուտ հայ և օտար բանասիրության։

Մեր ցեղի պատմության ամենամեծ մասը գրված է մեր հայերեն ձեռագիրներու թանկագին հիշատակարաններուն վրա։

Հուսալով որ ներկա մեր կոչը ընդունելով լուծն պիտի գտնեն մեր հայրենասեր ժողովուրդեն, կանխահայտ շնորհակալությամբ

Մնամք աղոթարար Հայրապետական

Պատվիրակ Եվրոպայի Հայոց

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

17 նոյեմբեր 1947 թ.

(«Արևմուտք» 23 նոյեմբեր 1947 թ.)

